

ԳՐԱԴՈՍԱԿԱՆ

LA CHAÎNE ARMÉNIENNE SUR L'ÉPÎTRE DE JACQUES

CHARLES RENOUX

Հայրախոսական գրականութեան ընդարձակ դաշտին մէջ անխոնջ աշխատող հայագէտ Charles Renoux 1985ին լոյս ընծայեց, *Patrologia Orientalis* շարքին իբրեւ 193րդ հատոր, կաթողիկոսայց թուղթերու շղթայաշար Մեկնութիւնէն Յակոբայ թուղթին վերաբերող բաժինը, հանդերձ Ֆրանսերէն թարգմանութեամբ:

Թիշեալ Մեկնութիւնը, գործ յոյն հեղինակի մը, Հայերէնի թարգմանած է, 1163ին, Գրիգոր Գպիկը Լամբրոնացի, և 13 տարի ետքը վերանայած և սրբագրած է Ներսէս Լամբրոնացի շրջա քերթողական արհեստին: Լամբրոնացին շատ համեստ կերպով յիշած է իր կատարած աշխատանքը, նկատելով որ իր կողմէ տեւիցեացած է բազմաթիւ հատուածներ, և շատ հատուածներ ալ վերստին խմբագրած է յաւելուածական բացատրութիւններով:

Patrologia Orientalis թիւ 193 հատորը կը բաղկանայ 160 էջերէ՝ հետեւել բովանդակութեամբ:

Նախաբան (էջ 5), Համառոտագրութիւնք (7-10), Ներածութիւն (11-29), Շղթայ Յակոբայ թուղթին վրայ (30-67), Անտիպ բնագիրներ և թարգմանութիւններ (68-153) թուով 88, Յանկ Սուրբ-Գրական յղումներու (155-157), Յանկ Հին Հեղինակներու (158-159), Յանկ Նիւթերու (160):

Ինչպէս կը տեսնենք վերը, հատորս կը բովանդակէ 88 անտիպ բնագիրներ, որոնցմէ շատերը անանուն են: Այդ անանուն հատուածներուն մէկ մասը վերագրելի են Ներսէսի՝ համեմատութեան ե-

ղանակով: Ներսէս կը յիշէ Յակոբոս Առաքեալը «երանելիս» որակումով. տես թիւ 5 և 24: Արդ՝ նոյն որակումը գործածուած կը տեսնենք նաեւ թիւ 12, 34, 46, 53, 59, 61, 74, 76 և 82 անանուն հատուածներուն մէջ: Այս իրողութիւնը մեզ կը մղէ յիշեալ հատուածները վերագրելու Ներսէս Լամբրոնացիին:

Հրատարակութեանս մէջ դիտելի են քանի մը բառեր, որոնք սխալ բաժնուած են, և ուրիշներ, որ սխալ միացած են, և կարօտ են ուղղումի. այսպէս,

1. — էջ 74. — սովորեն, սովոր են:
2. — Նոյն. — աղքատեա, աղքատ եւ:
3. — էջ 96. — շնորհէր, շնորհ էր:
4. — էջ 104. — վարդապետ է, վարդապետէ:
5. — էջ 106. — ամէն իմաստ. ամէն-իմաստ:
6. — էջ 116, 134. — շատ խաւսութեամբ, շատխաւսութեամբ:
7. — էջ 122. — վտանգողնէ, վտանգողն է:

Թերեւ տեւորող չէ յիշել որ թիւ 18 հատուածին մէջ «սիրապէս» բառը երկիցս թարգմանուած է «en toute vérité». տեւի ուղիւ պիտի ըլլար թարգմանել «souverainement», ինչպէս կը տեսնուի թիւ 26 հատուածին մէջ:

Մեծ խնամքով և մանրակրկիտ հետազոտութեամբ պատրաստուած այս հրատարակութիւնը արժէքաւոր յաւելում մըն է յարգելի հայագէտին հարուստ վաստակին վրայ:

Ն. ԱՐԲ. ԾՈՎԱԿԱՆ